## 65. ՎԱՆԵՍ ԱՊՈՐ ՀԱՔՅԱԹԸ

*Իլա̈լ ա̈ չիլա̈լ մին մարթ, էս մարթիս անումը՝ Վանես ապեր։ Սա աման օր քյո̈նում ա իլա̈լ վար անում։ Մին օր էլ վար անելիս վախտը տըեսալ ա. վըեր մին ծուվոց ա կյամ։ Քյինացալ ա տըեսալ մին առչ վըեննը ղա̈լա̈մ իլա̈ծ։ Ինքյը ո̈ւրա̈ն ասալ ա. «Թա քյինամ ղա̈լա̈մը վըեննիցը հանեմ, փախչեմ»։ Քյինացալ ա վըեննիցը ղա̈լա̈մը հանալ, փախալ։ Առչը ըսալ ա. «Ա՛դա̈, քյինալ մի, ա̈՛դա̈, քյինալ մի, խոսկ ըմ ասում»։ Նա կաղնալ չի, փախալ ա։ Առչը ընդըրա հետան քյինացալ ա, ասալ. «Ինձանից հինչ կօ՞ղես»։ Նա էլ ասալ ա. «Ջատ չըմ օղիլ»։ Առչը ասալ ա. «Փող կօղե՞ս»։ Վանես ապերն էլ ասալ ա. «Հա՛»։ Առչը ասալ ա. «Հեն ա փլան ծառին տակին մին գյո̈ւդյո̈ւմ փող կա, քյինա̈ եր կալ, ամմա կընդանա ասես ոչ հա՞, վըեր քյեզ կոտեմ»։ Թա. «Լա̈վ ա»։*

*Ետնան քյինացալ ա ծառին տակը քա̈նդա̈լ, մին գյո̈ւչյո̈ւմ փող եր կալալ, քյինացալ ո̈ւրա̈նց տուն։ Կնեգյը վըեր շատ զոռալ ու, նա էլ ասալ ա, թա. «Առչն ա տվալ»։ Առչն էլ հե̈ւրթա̈վը անգուչ ունելիս ըսկացալ ա, ետնան ետ ա տա̈ռալ, ասալ. «Վա՛նես ապեր, կըտեսնաս, հա̈լբաթ մին էլ կիկյա̈ս վար անես, թա ես քյեզ կերե ո՞չ»։ Վանես ապերը մին տարի էս փողավը ապրալ ա, էլ տո̈ւս չի եկալ, վըեր վար անի։*

*Մին վախտ մին աղվես եկալ ա, թա. «Մին ծո̈ւ տո, ես քյեզ տո̈ւս պի̈րեմ առչին աղաքը»։ Վանես ապերն էլ ասալ ա. «Լա̈վ»։ Աղվեսն ասալ ա. «Տու քյինա վարըտ ըրա, ես էլ քյինալու վըմ հըղ-*

ցումը թող անեմ, աոչը վրեր կյա ասի՝ հինչ ա յև՞, ասի՝ շահին ճորիքյր քոսուա ըն ինդյալ, տոշի եղի յրն ման կյամ. վրեր ասի՝ թա հունց անե՞մ, ասի՝ նի մուտ էտ չվալը։ Վրեր նի մնի չվալը, ըռեխը ոլնա կտղի, ես էլ կիկյամ, կթտկենքյ»։ Նա էլ ասալ ա. «Լա՛վ»։ Վաննես ապերը քյինացալ ա վարը ըրալ, աղվեսն էլ քյինացալ ա ընղեղ թող ըրալ։ Աոչը եկալ ա թա օտի, եշալ ա տըեսալ մին քյուշում թող ա եր ինում։ Հրցրալ ա թա. «Վաննես ապեր, էն հինչ թող ա եր ինում»։ Թա. «Շահին ճորիքյր քոսուտ ըն ինղյալ, տոշի եղի յրն ման կյամ»։ Աոչը ասալ ա թա. «Վաննես ապեր, էս հունց ա՞նեմ, Վաննես տղեր, էս հո՞ւնց անեմ»։ Թա. «Նի մըտ էտ չվալը»։ Նի յա մտալ չվալը։ Նա էլ ըռեխը ոլնտ կապալ ա։

Եանան աղվեսը եկալ ա։ Մինը սանղն ա եր կալալ, մինը՝ փայան, ինղյալ ըն տոշին ջանին, ըստրա էն ղղար թակալ, վրեր պատառ ա մնացալ, թա ըստակի։ Ախրըր չվալը ճղալ ա, տուս ա եկալ փախալ, քյինացալ հնղերունցը եր կալալ, թա կյա՛ն. վրեր ըստահանց ըսպանին։ Հնղերունքը մին էլ ինքյր լիհա՜ վրեր օղացալ ըն, թա ծոըավը նի մնեն ըստահանց օտեն, աղվեսն ասալ ա. «Վաննես ապեր, սանդն ինձ տա»։ Վաննես ապերն էլ առալ ա փայան։ Թակված աոչը վրեր էս լսալ ա, պուք ա եկալ, քյինացալ։ Հնղերնեն հրցրալ ըն, թա. «Պա հոը ը՞ս քյունում»։ Ասալ ա. «Թա տուք հա՛լա Վաննես ապոըը սանղը տըեստլ չըք, վրեր տուք էլ տըեսնաք, կըփախչեքյ»։ Եանան վրեր էս քյինացալ ըն, ուրանք-ուրանք ըն հետան քյինացալ։

Վաննես ապերը մին օր վար անելիս տեղը աղվեսը եկալ ա թա. «Ծուս տա»։ Բիրդան Վաննես ապորը փորը ղղռացալ ա, աղվեսը ասալ ա. «էտ հինչ ա՞»։ Նա էլ ասալ ա. «Հեն ա փորումըս մին զանգյու կա, մին էլ մին զիրանգյու, զանգյուն ասում ա՝ ես ըմ տուս կյամ աղվեսին օտեմ, զիրանգյուն ասում ա՝ ես ըմ տուս կյամ աղվեսին օտեմ»։ Աղվեսը լիհա՜ վրեր էս ըսկացալ ա, ասալ ա. «Քմատաղ, Վաննես ապեր, պաց մի թողիլ, պաց մի թողիլ, ծուն էլ քյեզ ինի, պաց չի թողես, թող ըրա ես փախչեմ քյինամ, ետավ պաց ըս թողում, պաց թողի»։ Եանան փախալ ա քյինացալ, Վաննես ապորը ծուն էլ մնացալ ա ուրան։

Աստվածանից իրեք խնձոր վեր ինգյնի. մինն՝ ըսողին, մինը՝ լսողին, մինը՝ չիլսողին։

